ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«24» մայիսի 2022թ. ՆՄՈ/347-2022

ք. Արմավիր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Շահումյան փողոցի N11/1 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանների փաստական տվյալների ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Ռ. Սահակյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 5-օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնի պետին (Ա. Համբարձումյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների կազմակերպման համար տրամադրել ծառայողական հերթապահ ավտոմեքենա:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Ա. Ավետիսյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Недействительная подпись Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

VERIFIED OCSP 5/24/2022 17:23:43 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2022 թվականի մայիսի 24-ի
ՆՄՈ/347 -2022 որոշման

Կազմ
աշխատանքային խմբի

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի
քաղաքաշինության վարչության գլխավոր ճարտարագետ՝ Ռաֆիկ Սահակյան.

Աշխատանքային խմբի անդամներ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի
տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր
մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման
և համայնքային ծառայության հարցերի բաժնի մասնագետ՝ Նարեկ Ղուկասյան.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի
իրավաբանական բաժնի ավագ մասնագետի պաշտոնակատար՝ Արաքսյա Սարգսյան:

Գլխավոր քարտուղար՝ **Ա. Հովհաննիսյան**

Недействительная подпись

VERIFIED OCSP 24.05.2022 16:56:18 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023